ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 հունվարի 2025 թվականի N 37 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 398-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2024 թվականի հոկտեմբերի 11-ի «Նյութական (դրամական) օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետի աշխատակազմ դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2022 թվականի հունիսի 22-ի N 238-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 398-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝ «Մարինե Աբգարյան - Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ» բառերը փոխարինել «Մարինե Աբգարյան - Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ» բառերով:

Recoverable Signature

X 2025-01-23 15:40:35 GMT+4
Հանձնաժողովի է ԷՖԻՍ-ի կողմից

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025 թ. հունվարի 23
ք. Կապան